Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԼԱՍԻՑԻԶՄԻ ՄԻ ՔԱՆԻ ԳԾԵՐԸ

Կլասիցիզմը հայ գրականության մեջ ունեցել է իր առանձնահատուկ, այլ ժողովուրդների գրականությունից տարբերվող գծեր։

Եվրոպական կլասիցիզմը իր բնույթով արտահայտել է ուժեղ պետականության գաղափարախոսությունը գրականության մեջ։ Այդ իսկ պատճառով էլ այն օգտագործել է իշխանության ձգտող կամ իշխանությունն արդեն իր ձեռքը վերցրած բուրժուազիան։ Այստեղից՝ կլասիցիստական գրականության բնորոշ գծերից մեկը՝ նրա որոշակի արտահայտված քաղաքական տենդենցիոզությունը։

Այլ էր դրությունը Հայաստանում, որտեղ մի կողմից Օսմանյան Թուրքիան, մյուս կողմից՝ Պարսկաստանը, շարունակում էին բզկտել Հայաստանն ու հայությանը։ Հայկական նոր զարգացող բուրժուազիան չափազանց թույլ էր ու անզոր՝ ազատելու իր երկիրն արևելյան այդ երկու բռնակալներից։ Այս հանգամանքը իր ազդեցությունն է գործել հայ կլասիցիստական գրականության վրա։ Կլասիցիստական ոչ մի հերոս մեզ մոտ հանդես չի գալիս այնպիսի պահանջներով, ինչպիսին, օրինակ, ֆրանսիական կլասիցիստների երկերում է. պետության արդարադատ կառավարում, արքայի այն թերությունների նշավակում, որոնք բացասաբար են անդրադառնում երկրի վրա, շարքային անհատների ազնիվ և անձնազոհ վերաբերմունք դեպի պետության շահերը և այլն։ Դրա փոխարեն, հայկական կլասիցիստական գրականության հերոսներն առաջ են քաշում մի այլ պահանջ. ըստ ամենայնի ազատ ու ճնշողների լուծը թոթափած հայրենիք ունենալու պահանջը, կենտրոնացած իշխանության, թուրքական ու պարսկական բարբարոս նվաճողներից ազատագրված հայրենիք ունենալու պահանջը։ Ըստ որում սկզբնական շրջանում, հատկապես Մխիթարյանների մոտ, այս պահանջը կրում է աբստրակտ-հայեցողական բնույթ, առանց կոնկրետ նպատակներ առաջադրելու, մոտավորապես այսպես՝ թե «ինչ լավ կլիներ, որ մեր հայրենիքը ազատ լիներ»։ Իսկ թե կոնկրետ ի՞նչ էր հարկավոր անել այս ցանկությունն իրագործելու համար, Մխիթարյանները չգիտեին, քանի որ վերջիններս հեռու լինելով բուն հայկական իրականությունից, աղոտ պատկերացում ունեին նրան անմիջապես հուզող խնդիրների մասին։ Բնորոշ են այս տեսակետից Պեշիկթաշլյանի հետևյալ տողերը, որոնք վերաբերում են նրա ստեղծագործության առաջին շրջանին, երբ նա դեռևս գտնվում էր «Մխիթարեան շնորհաշուք կաղապարի» ազդեցության տակ. «Հայրենի՜ք. ո՞ր ազգասէր սիրտը չի թնդար աս գեղեցիկ ու վսեմ անունս լսելով. հայրենի՜ք. չիկայ ասկե ավելի ցանկալի ու սրտի հաճոյական անուն մը. հայրենեաց սերը սաստիկ բոց մըն է, որ կը բորբոքի ազգասերին սրտին մեջը, որով կը մաշի անիկայ, չի կրնար հանդարտիլ, պատեհավոր առիթ մը կը սպասե ան սրտին մեջի վառած բոցը դուրս թափելու, ու աս կրակը չի մարիր, բայց միայն մահվամբ»[1]։

Սակայն հետագայում Պեշիկթաշլյանի, ինչպես և ոչ Մխիթարյան մյուս գրողների երկերում ժողովուրդների ազատության ձգտումների խորացման հետ սերտորեն կապված՝ հայ կլասիցիստների հայրենասիրության պահանջը կոնկրետանում է։ Այն արդեն որոշակիորեն ուղղվում է Հայաստանը ստրկացնողների՝ պարսկական և թուրքական բռնապետության դեմ։ Հայկական կլասիցիզմի մեջ հետզհետե ավելի շեշտված և ուժեղ է հնչում հայրեասիրության գաղափարը։ Նրանց հերոսները պայքարի են ելնում, կռվում ու մեռնում հանուն հայրենիքի ազատագրման։

[1] «Տաղք և թատրերգութիւնք Մկրտիչ Պեշիկթաշլեանի», Նյու-Եորք, 1917, էջ 121։

Հայրենասիրական բանաստեղծությունների մեջ իր ուրույն տեղն ունի Ղևոնդ Ալիշանը, որի հերոսը պարսիկների դեմ կռվող հայ քաջերին դիմում է հետևյալ բառերով.

Արի՛ք ի կռիւ քաջակորովքդ՝ ընդ կորակոր հրոսն Արեաց.

Հապա՜ համհարզք մեր բիւրայաղթք՝ ձեզ նոր հանդէսք են փառաց.

Թռի՛ք ի ռազմ ի խազմ, առէ՛ք զէն եւ զարդ,

Երեսնիւք յրսնիւք հարիւր բիւրս հազարս.

Ի սուր, ի սուսեր կարշնեղ յաղեղունս

Ըզսեաւ Սասանեանց ջարդել կառափունս[2]։

Իսկ սիրելի հայրենիքի համար մարտի ելնելու պահանջը իր հետ բերում է մի այլ հարց. ի՞նչ է հայրենիքը հայի համար և ինչո՞ւ է պետք պաշտպանել այն օտարազգի նվաճողներից։ Ֆրանսիական կլասիցիզմի մեջ այս հարցի պատասխանը տրվում է միանգամից. հայրենիքը պետք է պաշտպանել ու ամրապնդել, որովհետև զարգացող բուրժուական հարաբերությունները կարող են ամուր հիմք ունենալ միայն ուժեղ, տնտեսապես ու քաղաքականապես հզոր հայրենիքի առկայության դեպքում։

Այլ է հիմնավորումը հայ կլասիցիստական գրականության մեջ. Հայաստանը պետք է սիրել, որովհետև այն հայության օրրանն է, սրբազան Հայկի, Արա Գեղեցիկի, Տիգրանի օրրանը, գիտության, պատմության ու մատենագրության խոշորագույն ներկայացուցիչների՝ Խորենացու, Մաշտոցի, Եղիշեի, Եզնիկի և այլոց հայրենիքը։ Հանդուրժել, որ թշնամին ոտանկոխ անի Հայաստանը, նշանակում է սրբապղծություն թույլ տալ, նշանակում է անարգել նախահայրերի սրբազան նշխարներն ու նրանց հավիտենական նզովքին արժանանալ։ Հայկական իշխանության տվյալ ժամանակաշրջանում այսպես է հիմնավորվում հայրենասիրությունը կլասիցիստների ստեղծագործության մեջ։

Հայրենասիրության այսպիսի մեկնաբանությունը հայ կլասիցիստական գրականության մեջ բերել է մի ամբողջ շարք յուրօրինակություններ։

Ինչպես հայտնի է, եվրոպական կլասիցիստները իրենց դարաշրջանը պատկերելու և դրվատելու համար անդրադառնում էին հին հունական ու հռոմեական աղբյուրներին, որովհետև վերջիններս համարվում էին ամենակատարյալները։ Իսկ հայկական կլասիցիստները չափազանց քիչ են անդրադարձել օտար աղբյուրների ու հեղինակության, իրենց ստեղծագործության նյութով ու թեմաներով նրանք համարյա դուրս չեն եկել Հայաստանի սահմաններից։ Սա, իհարկե, չի նշանակում, որ հայ կլասիցիստները չեն օգտվել անտիկ աշխարհի աղբյուրներից, ինչպես և օտարազգի կլասիցիստներից։ Ազդեցություն, անշուշտ, եղել է, սակայն նրանց համար հիմնական աղբյուրը ծառայել են Հայաստանի պատմության այլևայլ դեպքերը, գլխավորապես հերոսական դրվագները, հեթանոսական անցյալը և այլն։ Սրանում համոզվելու համար բավական է թվել մի քանի գործեր և տալ նրանց համառոտ բովանդակությունը։ Մ. Ջախջախյանի «Հաղթութիւն Տրդատայ ի վերայ Հռչէ» գործում օտարազգի Հռչեն փորձում է կողոպտել Հայաստանը, սակայն

[2] Ղ.Ալիշան, Նուագք, հ. Գ, էջ 118։

Տրդատը կատաղի մարտում ջարդում է նրա հրոսակներին, սպանում է նրան և փրկում Հայաստանը: Նույն հեղինակի «Դավագործ մահ Մեծին Խոսրովու» գործում, թեև թշնամիները սպանում են Հայաստանը շենացնող Խոսրով թագավորին, բայց հայերը հաղթում են թշնամիներին, պատժում դավաճաններին և ամրապնդում Հայաստանը: Գ.Ավետիքյանի «Վահան Մամիկոնյանի մարզպանության» մեջ Մամիկոնյանը դառնալով մարզպան, վռնդում է երկրից պարսիկներին և խղճմտանքով կառավարում երկիրը և այլն:

Այնուհետև հայտնի է նաև, որ ինչպես եվրոպական, այնպես էլ ռուսական կլասիցիզմը խոշոր առաջադիմական դեր է կատարել ազգային լեզուների կազմավորման գործում: Մաքրվում և հղկվում է ֆրանսերենը, բարբառայնությունից ու հին-սլավոնական տարրերից ձերբազատվում է ռուսաց լեզուն, հստականում է անգլերենը և այլն:

Լեզուն հղկելու նման տենդենց նկատվում է նաև հայ կլասիցիստական գրականության մեջ, որը ծայր է առնում դեռ Մխիթարյաններից: Սակայն պետք է նկատել, որ վերջիններս հայոց լեզու համարում էին գրաբարը, գրում և գործում էին այդ լեզվով, և նրանց այդ նորարարությունը լեզվի հարցում վերջին հաշվով չնչին օգուտ բերեց ժողովրդին:

Մոտ 150 տարվա տևողություն ունի կլասիցիզմը հայ գրականության մեջ, սկսած 1700 թվից մինչև 1850-ական թվականները, թեև առանձին գործեր հրատարակվում էին նույնիսկ դարեվերջին:

Հայկական կլասիցիստական գրականության մեջ սկզբնական շրջանում առաջին պլանի վրա է մղվում ներբողի (ода) ժանրը: Այդ ժանրի առաջին ներկայացուցիչը և միաժամանակ հայ կլասիցիզմի նախահայրը Մխիթար Սեբաստացին է, որի 1732 թ. հրատարակած «Տաղարանը» հանդիսանում է վերոհիշյալ ժանրի և կլասիցիստական ուղղության առաջին գործը: Եվրոպական գրականության մեջ ներբողը եղել է ստեղծագործության հիմնական ձևերից մեկը և ենթարկված է եղել որոշակի կանոնների, այն է՝ ներբողը պետք է լիներ հանդիսավոր, գրված ամենաընտիր և մաքուր լեզվով, նրանում պետք է գովերգվեին և փառաբանվեին էին պետական նշանավոր գործիչներ, արքաներ, անուն հանած զորավարներ և այլն: Այս սկզբունքով են ներբողներ գրել Միլտոնը, Պոպպն ու Դրայդենը Անգլիայում, Մալերբը և Ռուսսոն՝ Ֆրանսիայում, Դերժավինը, Լոմոնոսովը, Տրեդիակովսկին՝ Ռուսաստանում և այլն:

Հայկական կլասիցիզմի մեջ ներբողի վերոհիշյալ ձևը, այսինքն՝ հանդիսավորությունը, գեղեցիկ ու ճոխ գրաբարը պահպանվում է, սակայն հիմնովին փոխվում է ներբողվող օբյեկտը: Հերոսների և նրանց կատարած սխրագործությունների փոխարեն սկզբում փառաբանության առարկա են դառնում Քրիստոսը, Աստվածածինը, քրիստոնեական այս կամ այն տոնը, սրբերի վարքից վերցված դրվագները և այլն: Այս տեսակետից ցայտուն օրինակ կարող է ծառայել Մխիթար Սեբաստացու «Տաղարանը»: Հայ կլասիցիստական գրականության մեջ ներբողը խիստ բնույթ ունի և սահմանափակվում է երկարաշունչ, քաղցր-մեղցր գովեստներով երկնային սրբերի, Քրիստոսի, Աստծու, Աստվածամոր հասցեին:

Հետագայում Մխիթարյանների մոտ ներբողի ժանրը ավելի բազմազան է դառնում: Աստիճանաբար ու հատկապես Մ.Սեբաստացու մահից հետո գրվում են ներբողներ այդ «մեծ հայի», «անզուգական անհասանելիության» մասին: Ավելի ուշ երևան են գալիս ներբողներ՝ գրված միաբանության մեջ տեղի ունեցած որևէ նշանավոր դեպքի առիթով, ձոնված իրենց հրատարակությունները հովանավորող այս կամ այն «ազգայինին», Ս.Ղազար այցելող նշանավոր մարդկանց: Հաճախ էլ միաբանները ներբողում են միմյանց, կիրառելով իրենց միջավայրում տարածված «բռնահանգն» և «բռնակարգը»:

Այժմ մի քանի խոսք կերպարների կերտման կլասիցիստական եղանակի մասին։

Կլասիցիզմը լիովին հասկանալու համար հարկ է առաջին հերթին քննության առնել ստեղծագործության ներքին կառուցվածքն ու հերոսներին, որովհետև հայ կլասիցիստները հաճախ են խախտել եվրոպական կլասիցիզմի համար անհրաժեշտ համարվող արտաքին կանոնները։ Այսպես. Պ.Մինասյանի «Տիգրան և Աժդահակ» ողբերգությունն ունի երեք գործողություն, իսկ Մ.Աղաբեկյանի «Գարեգին Սրվանձտեանց» ողբերգությունը՝ չորս գործողություն. մի հանգամանք, որ եվրոպական կլասիցիզմի թեորիայի համաձայն, համարվում էր ամենակոպիտ խախտումը։ Ներբողը, համաձայն նույն թեորիայի, պետք է գովերգի միայն բարձրաստիճան անձանց և նրանց հերոսությունները, մի բան, որն, ինչպես տեսանք, խախտում էին հայ կլասիցիստները։ Կարելի է նշել այս կանոնների այլ խախտումներ ևս։ Սակայն բավական է ուսումնասիրել կլասիցիստական երկերի կերպարները, նրանց ստեղծման սկզբունքները, որպեսզի միանգամից ակնհայտ դառնան այդ բոլոր առանձնահատկությունները։

Այսպես. եվրոպական կլասիցիստների երկերում կին հերոսների բնորոշ գծերից մեկն այն է, որ նրանք օժտված են ավելի տղամարդուն բնորոշ գծերով։ Լեսսինգն իր «Համբուրգյան դրամատուրգիայի» մեջ քննադատում էր Կորնելի ստեղծած Կլեոպատրային՝ 1664 թ. գրված «Ռոդուգյունդ» կլասիցիստական ողբերգության հերոսուհուն, այն բանի համար, որ վերջինս նույնիսկ առանց լուրջ հուզմունքի սպանում է ամուսնում, ապա՝ երեխաներին։ Մի հանգամանք, որն ամբողջովին զրկում է հերոսուհուն կանացիությունից, քնքշությունից։

Այս երևույթը նկատվում է նաև հայկական կլասիցիզմի ներկայացուցիչների մոտ։ Բնորոշ է այս տեսակետից Արսեն Բագրատունու «Հայկ դիւցազն» գործը, որին, ի դեպ, հեղինակը վեպ է անվանել։

... (Դրվագ ԺԳ) Հայկանուշը, տեսնելով, որ հայոց զորքերի դրությունը դժվարանում է և իր սիրած երիտասարդը՝ Հրանտը գնում է կռիվ, հագնում է հոր՝ Հայկի զենք ու զրահը և շտապում է մարտադաշտ։

Եվ ի՜նչ.

« «Այ նենգաժոտ դաւաճանք գիշերագնաց աղուեսուց ջոկ,

Ըզճամբար դիւցազանց՝ հաւուց դադարս համարեցայք»

Մոնչեալ կոյսն, արձակեաց դաշտէն և իւրք առհասարակ

Շամիրեան գնդին երեք անկանէին յահեակ թեւէ,

Ի բազկէն Հայկանուշայ Սայինն ըսկայ սոսկավիթխար,

Եվ յայլոց՝ ՈԻխաթա և Վուրկ ընտիր քաջ մեդացիք։

Արձակեալ գեղարդն երկրորդ՝ դի ցուրտ յերկիր ընկենուին

Զարին Արտաւան և ըզՎշնասպն կորովի»[3]։

Մարտի ընթացքում Հայկանուշի վրա հարձակվում է թշնամու հաղթանդամ քաջերից մեկը, կարծելով, թե գործ ունի Հայկի հետ։ Սկսվում է կատաղի մենամարտ և հաղթում է Հայկանուշը։

«Մերկացեալ սուր ի վերայ Բուրդար ըսկայն գայր ահաւոր

[3] Ա.Բագրատունի, Հայկ դիւզացն, էջ 366։

Փոքր մի ևս, կենաց կուսին խըզեալ առէջն էր ոսկեթել

Այլ անդէն ընկեցեալ նորա ի բաց ըզտիգաբունն,

Եվ հանեալ ըզԹորգոմեան պողովատիկն իբրև զփայլակն

Արագափոյթ, սաստկապէս կոփեալ, ի գլուխն վիրագին

Ըզգլխանոցն երկաթի և ըզկառափն պատառէր»[4]։

Այսպիսի քիչ հերոսություններ չի անում նաև Հայկի մյուս դուստրը՝ Արուսյակը։

Նմանատիպ տիտանական գծերով է օժտված նաև Խ.Բաղդասարյանի «Ատրինէն» վիպերգության հերոսուհին։ Իմանալով, որ եկել են իրեն առևանգելու, Ատրինեն գիշերը

«...Զարթեալ ընդոստ, ժըխորալից ղողանջիւնեն

Վայրկեան մի վարանեցավ, ապա ելավ, հագավ շտապով

Սեր և զայրույթ անդին պատվոյն վախն իսպառ էր փարատած

Փույթ ընդ փույթ առավ պատեն զատըրճանակ կազմ և պատրաստ»։

Նա սկսում է կատաղորեն կռվել թշնամու դեմ, կոտորել նրանցից շատ-շատերին։ Նույնիսկ այն ժամանակ, երբ դրությունը հուսահատական էր և տղամարդիկ անգամ լքում էին դիրքերը, Ատրինեն, վիրավոր ձեռքը կրծքին կապած, շարունակում է կրակ թափել թշնամու գլխին։

Այսպիսով, Լեսսինգի մեղադրանքը հավասարապես վերաբերում է նաև հայ կլասիցիստներին, որոնք նույնպես հերոսականության հետևում մոռացել են բնականն ու իրականը։

Տղամարդկանց կերպարները ևս գծագրվում են որպես դյուցազուններ, հսկաներ, առասպելական մեծ ուժի տեր մարդիկ։ Ահա Հայկի նկարագիրը Բագրատունու «Հայկ դյուցազնում»։

«Ամբարձեալ Հայկ զաչս յերկինս կարդայր զհորն իւր յօգնութիւն

Տառատոկ վարապանակ արկեալ զուսովքըն թիկնաւէտ

Սուսէր սուր երկսայրի կապեալ յազգեր իւր յահեկէ

Եվ անձամբ առեալ լօդիկ մեծ ծիրանի նըկարակերտ

Եվ ի գլուխն սաղաւարտ ահեղ ճոճեալ փաղփուն վերջօք

Ելանէր որդուվքն հանդերձ, խայտար դյուցազն ի մէջ քաջաց,

Խորորք վարսից գանգուրագեղ զուսովն իջեալ ծածանէին

Նա նիզակ արի ճոճեալ ի գաւազան իշխանութեան՝

Հարկաներ գործոյն խրախոյս աչօքն անձամբ և հրամանաւ

Հզօր ակնարկելով շարժէր զիլուս շուրջ ընդ աշխարհն

Որպես վէմ անկեալ ուժգին յանդորր երես ջուրց ծովակի

[4] Ա.Բագրատունի, Հայկ դիւզացն, էջ 367։

Արձակէ վէտ վէտ ըսփիռ բոլորաձև յափնաձիր կոյս»[5]։

Այսպիսի գծերով է օժտված նաև Զավանը Գ.Պատկանյանի «Զավան և Փառնակ Ա» ստեղծագործության մեջ։ Վերջինս տարիներ շարունակ եղել է ավազակների միջավայրում և վարժվել ամեն մի դժվարության.

«Ծովի տղայ էր անունս աւազակը կոչեցին

Նավի կայմեն ծովայատակ հաստատ առներ Զաւանին.

Զուկը ձեռքով էի բռնում անդընդախոր տեղերում,

Օձեր վզիս փաթթում էի ու պահում իմ ծոցերում»[6]։

Կլասիցիստ հեղինակների կողմից «աշխարհը» կամ «բնությունը» ընկալվում էր միակողմանիորեն։ Իրական կյանքում միևնույն կերպարը կարող է օժտված լինել և՛ դրական, և՛ բացասական գծերով, հանգամանքների բերումով նա կարող է լինել քաջ, բայց և հապաղող, նա կարող է հերոսաբար կռվել, բայց և հարազատի կամ զինակցի մահը տեսնելով՝ հեկեկալ և այլն։ Սակայն կլասիցիստների ստեղծագործության մեջ հերոսը կամ միայն դրական է, կամ միայն բացասական, կամ մոլեռանդ հայրենասեր է, կամ կատաղի դավաճան։ Ըստ որում հերոսների դրական կամ բացասական լինելը բացահայտվում է ոչ թե ամբողջ ստեղծագործության ընթացքում, կերպարը բացահայտվում է ոչ թե աստիճանաբար, այլ հենց սկզբից. հերոսները հանդես են գալիս իբրև պատրաստի կաղապարված ու ավարտված դրական կամ բացասական տիպեր։ «Ատրինէն»-ի մեջ, օրինակ, ընթերցողը հենց սկզբից ծանոթանում է Վիրգինի հետ՝ որպես այսպիսին.

«Աչքն գոցես բոցաւառեալ յաստղիկեան հուր լըպըրշական

Բիւր պըչըրանօք, մեղմեղանօք, այսըր, անդըր յածեց նազէր

Որչափ ջանայիր անիկա քաղցր ու սիրուն յերևիլ

Այնչափ լկտի և անհաճոյ կընծայեր զիւր գեղեցկութիւն»[7]։

Անձնավորության այս նկարագրությանը հաջորդում են նրա քստմնելի գործերը։ Մինչդեռ հենց սկզբից այլ է Ատրինեն.

«...Աննըման դեմք, գէր և շըքեղ

Շուշանի նման սպիտակափայլ, լուսնի նման բոլորածիր

Դշխոյի պես վեհաշուք, վարդի հանգոյն գըրգասուն

Աչքունք փարփառ և մեծամեծք, ոնց գրկնային գեղոյ նըշոյք»[8]։

Այսպիսի նկարագիր ունեցողն էլ, անկասկած, դրական տիպ պետք է լինի և, իրոք, դա այդպես է։

Կլասիցիստական դրամատուրգիայում հատկապես, հերոսները հանդես են գալիս իրենք իրենց մասին երկար մենախոսություններով, պատմում են այն ամենը, ինչ արել են, կամ ինչ մտադիր են անելու, խոսակցության ժամանակ բացահայտում են իրենց ծրագիրն ու նպատակները։

---

[5] Ա.Բագրատունի, Հայկ դիւզացն, էջ 13։
[6] Գ.Պատկանյան, Զավան և Փառնակ Ա, էջ 25։
[7] Խ.Բաղդասարյան, Ատրինէն, էջ 37։
[8] Նույն տեղում, էջ 9։

Այս պատճառով էլ կլասիցիստական գրականության հերոսները կենդանի, միս ու արյուն ունեցող հերոսներ չեն՝ իրենց բնական, իրական հոգեբանությամբ և ձգտումներով։ Դրանք միայն լավ կամ վատ գաղափարներ կրող ձայնափողեր են, չափազանց վերացական, ընդհանուր։ Կլասիցիստական հերոսը հայ կամ պարսիկ է ընդհանրապես, նա դավաճան է կամ հերոս, նախարար է, զորավար է ընդհանրապես։ Այստեղ ևս հայ կլասիցիզմը ընդհանրություն ունի եվրոպական և ռուսական կլասիցիզմի հետ։

Գալով բնության պատկերմանը, ապա կլասիցիստ հեղինակների մոտ բնությունը ստորադասվում է հերոսներին ու ծավալվող դեպքերին։ Եթե հերոսը մռայլ է, զայրացած կամ պատրաստվում է, ասենք, մեծ ճակատամարտի, ապա բնությունը ևս փոթորկոտ է, մրրկահույզ։ Իսկ եթե հերոսը ուրախ է, հանգիստ, կամ եթե մեծ ճակատամարտն ավարտվել է հաջողությամբ և մարդիկ զվարթ տուն են վերադառնում, եթե ճաշկերույթ է և այլն, ապա բնությունն էլ է ուրախ, զվարթ, թռչունները ճռվողում են և այլն։ Այսինքն՝ կրկին երկու հակադիր վիճակ՝ դրական կամ բացասական։ Բնության հենց այնպես, անկախ հերոսների վիճակից և տեղի ունեցող դեպքերից նկարագրություն, կլասիցիստների մոտ չենք հանդիպում։ Այս առումով հետաքրքրական է «Հայկ դյուցազն»-ը, որի իններորդ դրվագում հեղինակը շատ գեղեցիկ է նկարագրում բնությունը.

«Ըզլերանցն ապահունեաց լուսինն ի մուտս անցեալ զըգլխովք

Խրոխտաձայն աւետէին զկենդանարար լոյսն հաւախօսք

Ճընճղուկք և հաւք զարթուցեալ ճըռուողէին յուրեանց լեզուս

Ողջունել ըզգալուստ քըրքմահանդերձ առավօտուն

Եվ արտոյտ անձկակարօտ յականապարար լոյս այգածին

Երգ ի բերան քաղցրաբարբառ թողեալ ըզդաշտ արփաթեւէր։

Կափուցեալ զաչս աստեղաց ի ճաճանչից արեգական,

Լուսաբերըն սիրալիր մեծապայծառ զըւարթ ակամբն

Հայէր միայն տակաւին յարեւելից պատշգամբէն»[9]։

Բնությունն այսպես հիանալի է և գեղեցիկ, որովհետև Ապահը գիշերը կռվել-սպանել է վիշապին և փրկել նրա գերած չնաշխարհիկ գեղեցկուհուն, որը հենց այդտեղ սեր է բացատրվել նրան։ Նույն գրքի տասներորդ դրվագում, 60 տողի սահմաններում Բագրատունին նկարագրում է այնպիսի մի զարհուրելի փոթորիկ, որը եթե գրաբար լինելու հետևանքով դժվարամատչելի չլիներ, կարող էր բնության պատկերման տեսարանների մեջ լավագույններից մեկը համարվել։ Ահա մի հատված.

«Խաւարեցան և երկինք կորեաւ լուսին և արեգակն,

Յարհաւիրս ծովուն խառնեալ էջ սեաւ սոսկումն և սարսափ

Գունտ երկնից որոտալիր զօռաց ամպոց կուտակմանէ

Եվ հրացան բարկութեանց, պատուհասի փայլատակունք

Ըսկըսան եռալ, լեռալ և յամպրոպաց շանթել ի ծոց

[9] Ա.Բագրատունի, Հայկ դիւզացն, էջ 9։

Շառաչմամբ կայծակնաթափ տեղեալ յերկիր բոց բարկաճայթ

Հարկանել զբարցունս լերանց և զլեռնացեալ ծովուն անդունդս։

Շողան շանթք նաւացն ի կայմս և զաչս արանց շըլացուցին

Մրրկատարափ կուռ կարկուտ կըռփեր կոծեալ ի կառափունս»[10]։

Պատահական չէ նաև այս մոլեգնած բնության պատկերումը։ Բանն այն է, որ հայերը սաստիկ զայրացած են, որովհետև Բելի մարդիկ գիշերը գաղտագողի հարձակվել են իրենց վրա, կոտորել մարդկանց և փախել։

Բնության նմանատիպ պատկերումը, ինչպես նաև հերոսների այսկերպ պատկերումը քիչ ընդհանուր բան ունի իրականության հետ և լավագույն դեպքում հանդիսանում է նրա «մեղմացած» վերարտադրությունը։ Առանձնահատկություն, որ ամենաբնորոշն է ինչպես եվրոպական, նույնպես և հայկական կլասիցիստական գրականության համար։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տեղեկագիր

1957, N 12

[10] Ա.Բագրատունի, Հայկ դիւզացն, էջ 288։